ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՄԵԾ ՈՒԹՆՅԱԿԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ

Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսը (ԵԵԿ) իր «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի միջոցով, որի հանդիպումը տեղի ունեցավ 2005 թ. հունիսի 15-19-ը Շոտլանդիայի Դանբլեյն քաղաքում, ողջունում է Բրիտանական կառավարության նախաձեռնությունը՝ առաջնահերթ ուշադրության արժանացնելու Հազարամյակի Զարգացման Նպատակները (ՀԶՆ)՝ որպես մեծ ութնյակի գագաթաժողովի կենտրոնական հարց ունենալով Աֆրիկա մայրցամաքը: Որպես աշխարհասփյուռ Եկեղեցիների մաս լսելով կարիքավորների ձայնը՝ մենք հավատում ենք Աստծո պատգամին՝ պաշտպանել աշխարհը, պահպանել մարդկային արժանապատվությունը, հասարակական արդարությունը և հոգ տանել Աստծո արարչագործության մասին: Ուստի մենք հույժ կարևոր ենք նկատում, որ մեծ ութնյակի գագաթաժողովը հիմնական ոլորտներում իրականացնի բազմակողմանի պարտքի, զարգացման օգնության, առևտրային արդարության ծրագրեր և քայլեր ձեռնարկի կլիմայական փոփոխությունները կանխելու ուղղությամբ:

Բազմակողմանի պարտք. Ողջունում ենք մեծ յոթնյակի Ֆինանսների Նախարարների վերջին համաձայնագիրը: Սակայն պետք է ընդլայնել այն՝ ներգրավելու համար մեծ պարտքեր ունեցող այլ աղքատ երկրների, և պետք է հարգվեն այս ասպարեզում տրված խոստումները: Նրանց կողմից վերահսկվող հարուստ երկրներն ու հաստատությունները պետք է փորձեն մարել ծայրաստիճան աղքատ երկրների պարտքերը: Նրանք չպետք է դա անեն՝ աղքատ երկրներին օգնություն տրամադրելու նոր հնարավորություններից զրկելով, այլ ֆինանսական նոր աղբյուրներ հայթայթելով: Պարտքերից ազատված միջոցները պետք է օգտագործել քաղաքականություն մշակելու համար՝ նպատակ ունենալով ստեղծել կառավարման բարօր ձևեր և նվազեցնել աղքատությունը: Հետագա համաձայնագրերի համար պետք է մշակել արդար և թափանցիկ դատական գործընթաց:

Զարգացման օգնություն. ԵԵԿ հորդորում է մեծ ութնյակի գագաթաժողովի մասնակիցներին՝ արագորեն հաջողություններ արձանագրել Համախառն Ազգային Արդյունքի 0.7%-ի՝ համաշխարհային հավանության արժանացած նվազագույն ստանդարտի հարցում, որ տրվում է որպես զարգացման օգնություն: Մենք հորդորում ենք բոլոր կառավարություններին՝ միանալ նրանց, ովքեր ժամանակացույց են սահմանել հասնելու 0.7%-ի նպատակակետին: Ժամանակացույցը պետք է պարտադիր լինի և վստահեցնի, որ նպատակակետին կարելի է արագ հասնել՝ մինչև 2015 թվականը: ԵԵԿ ընդգծում է Միջազգային Ֆինանսական Միջոցների (International Finance Facility), Դրամական Փոխանցումների Հարկի (Currency Transaction Tax), Օդանավերի Վառելիքի Հարկի (Aviation Fuel Tax) օրինակով նոր ֆինանսական համակարգերի զարգացման անհրաժեշտությունը: Սակայն պետք է զգուշանալ, որ այսօր կատարվող որևէ գործողություն չծանրաբեռնի ո՛չ աղքատ և ո՛չ էլ հարուստ երկրների գալիք սերունդներին:

Առևտրային արդարություն. Պարտքը չեղյալ համարելը և զարգացման օգնության աճը քիչ ազդեցություն կունենան, եթե քայլեր չձեռնարկվեն՝ վերացնելու կառուցվածքային խոչընդոտները, ինչպիսիք են առևտրային անարդար օրենքները, որոնք շատ զարգացող երկրներում վնասում են առևտրին և երկարաժամկետ ծրագրերին: ՀԶՆ-ին հասնելու համար մեծ ութնյակը չպետք է օժանդակի «ազատականացման» այնպիսի ծրագրերին, որոնցից հաճախ շահում են զարգացած երկրների արտահանողները: Անընդունելի են ինչպես թույլ տնտեսություն ունեցող երկրների արտադրության դեմ կիրառվող խոչընդոտները, այնպես էլ արդեն զարգացող տնտեսություն ունեցող երկրներից գյուղատնտեսական և այլ ապրանքներ արտահանելու ծրագրերի օժանդակությունը:

Կլիմայական փոփոխություններ. ԵԵԿ միանում է Եվրոպական Քրիստոնեական Բնապահպանական Ցանցին՝ հորդորելով մեծ ութնյակի առաջնորդներին, ում երկրները պատասխանատվություն են կրում աշխարհում ջերմոցային գազերի արտանետման համարյա կեսի համար, օգտվել այս առիթից, վճռական քայլեր գործադրել ջերմոցային գազերի արտանետումը արագորեն նվազեցնելու համար և Կիոտոյի օրակարգից դուրս միջազգային գործունեության շրջանակ ստեղծել: Նպատակը պետք է լինի ջերմոցային գազերի արտանետման կտրուկ նվազեցումը մեծ ութնյակի երկրներում և աղքատ երկրներում նույն խնդիրը լուծելու համար ֆինանսական պարտավորություններ ստանձնելը՝ ապահովելով բնապահպանության կայուն զարգացում:

ԵԵԿ-ն, քաղաքացիական հասարակության այլ գործընկերների հետ միասին, կշարունակի հետևել մեծ ութնյակի կառավարությունների արձանագրած հաջողություններին՝ միջազգային հանրության առջև իրենց ստանձնած պարտավորությունների կատարման հարցում:

Մենք ողջունում ենք անցյալ տարի մեծ ութնյակի ստանձնած պարտավորությունը՝ միջոցներ փնտրել նվազեցնելու գաղթականների դրամական փոխանցումների գինը: Մենք ակնկալում ենք այս հարցի հետագա քննարկումը մյուս հարցերի հետ միասին: ԵԵԿ-ի անդամները հասկանում են մեծ ութնյակի առջև ծառացած հարցերի շարքն ու բարդությունը և կհետևեն ու կաղոթեն նրանց համար իրենց ծանր պարտականությունների կատարման ընթացքում:

ԵԵԿ «ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Թարգմանությունը անգլերենից՝
Գայանե Ալեքսանյանի